ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

11 **փետրվարի** 2020 **թվական**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/1
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 57 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետի մամուլի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարները:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ի ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը տեղեկացրեց, որ ԻՄ ՔԱՅԼԸ կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամ Հենրիկ Հարթենյանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի պաշտոնից հրաժարվելու մասին:

Նախքան օրակարգի նախագծին անդրադառնալը, ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյանը:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու 2020 թվականի փետրվարի 11-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
3. Երևան քաղաքում Գոհար Գասպարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:
4. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
5. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
6. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:
7. Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին:
8. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:
9. «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին:
10. 2009 թվականից մինչև 2013 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արխիվում պահպանվող, Երևան համայնքի սեփականությունը համարվող որոշ արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին:
11. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 45 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝45, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը հայտնեց, որ, ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 96-րդ կետով, Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովը ձևավորելու նպատակով խմբակցությունները ներկայացրել են առաջարկություններ՝ հաշվիչ հանձնաժողովի կազմում ավագանու հետևյալ անդամների թեկնածություններն առաջադրելու համար.

- ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն՝ Էդուարդ Ավետիսյան,
- ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն՝ Մարկոս Հարությունյան,
- ԼՈՒՅՍ խմբակցություն՝ Անի Խաչատրյան

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը.

1. Էդուարդ Ավետիսյան – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն
2. Մարկոս Հարությունյան– Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն
3. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցություն

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 48 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ - 48
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքում Գոհար Գասպարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արմեն Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Գայանե Մելքոմ Մելքոմյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արմեն Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Գոհար Գասպարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Լեոնիդ Ազգալդյան փողոցից մինչև Կասկադ համալիր ձգվող ճանապարհահատվածը /Վերին Անտառային 19Ա հասցեից մինչև Վերին Անտառային 122 հասցե/ անվանակոչել հայ օպերային արվեստի մեծագույն վարպետ, ՀՀ ժողովրդական արտիստ Գոհար Գասպարյանի անվամբ՝ «Գոհար Գասպարյան փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝51, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

4. **ԼՍԵՑԻՆ** - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սուրեն Էյրամջյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վահան Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Հասմիկ Խաչունց-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արգիշտիի փողոցի հ.48 և հ.48/1 հասցեներում Յուրի Աֆրիկյանին սեփականության իրավունքով պատկանող համապատասխանաբար 4585.0քմ և 1020.0քմ մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝51, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

5. **ԼՍԵՑԻՆ** - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սիփան Ասատրյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Կոմիտասի փողոց հ.59 հասցեում «Լուսատեխնիկ» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 1.342հա, 0.41948հա և 0.01հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 49 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝49, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

6. **ԼՍԵՑԻՆ** - Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1.Մարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

2.Արման Անտոնյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2.Գայանե Վարդանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Մարգարյան փողոցի հ.35 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.26012016-01-0117 վկայական) 942.1քմ մակերեսով գույքը (մանկապարտեզ՝ 926.7քմ և կաթսայատուն՝15.4 քմ մակերեսով տարածքները) և դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 3262.25 քմ մակերեսով հողամասը, անհատույց օգտագործման իրավունքով հինգ տարի ժամկետով տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը («Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ):

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝51, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

7. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Սուրեն Օհանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1.Հասմիկ Խաչունց-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար

2.Արսեն Կարապետյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3.Մեսրոպ Պապիկյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Սուրեն Օհանյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Արսեն Կարապետյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2.Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

«Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Եզրափակիչ ելույթներով հանդես եկան «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Սուրեն Օհանյանը և Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտիավորման նախագիծը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝52, դեմ՝0, ձեռնպահ՝2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

8. **ԼՍԵՑԻՆ** - Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Էդգար Գալստյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Հռիփսիմե Առաքելյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը և քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Է. Գալստյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Նուարդ Վարդանյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Իզաբելլա Աբգարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Միքայել Մանրիկյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
4. Մարատ Թոխյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ 2020 թվականի ընթացքում շարունակելու հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի տեղական վճարների դրույքաչափերը հաստատելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 57 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝37, դեմ՝11, ձեռնպահ՝9

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

9. **ԼՍԵՑԻՆ** - «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սերգեյ Ասլանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Միքայել Մանրիկյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
2. Մեսրոպ Պապիկյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս. Ասլանյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ ««Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Մեսրոպ Պապիկյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Սերգեյ Սարգսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Սուրեն Էյրամջյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս. Ասլանյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1.Հավանություն տալ տալ «ԴԵՎԻ ՍԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Հավատարմագրային կառավարիչ) կողմից ներկայացված՝ «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) բաժնետոմսերի հավատարմագրային կառավարման պայմանագիր կնքելու առաջարկին և Ընկերությունում ներդրումներ կատարելու ծրագրին՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող Ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հանձնել Հավատարմագրային կառավարչի՝ հավատարմագրային կառավարմանը:

3. Թույլատրել Երևանի քաղաքապետին Հավատարմագրային կառավարչի հետ Երևան համայնքի անունից կնքել հավատարմագրային կառավարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), 10 տարի գործողության ժամկետով՝ հանդես գալով որպես հավատարմագրային կառավարման հիմնադիր, Պայմանագրում, որպես պայմանագրային պարտավորություն, ներառելով սույն որոշման 5-րդ կետի համաձայն սահմանած պայմանները:

4. Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագրով սահմանել, որ հավատարմագրային կառավարիչն ընդունում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան Ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները, այն է.

1) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի իրավասությանը վերապահված որոշումները գրավոր ձևով, հետևյալ հարցերով միանձնյա ընդունելու իրավունքը.
ա. Ընկերության գործադիր մարմնի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ. Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը,

գ. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

դ. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

ե. հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

զ. Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով,

է. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,

ը. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,

թ. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնա-կարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,

ժ) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,

ժա) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը:

5. Սահմանել Պայմանագրի հետևյալ էական պայմանները.

1) հավատարմագրային կառավարման ընթացքում՝ հիմնադրին վճարվելիք շահաբաժնի չափը հաշվարկել Ընկերության զուտ շահույթի 22%-ի չափով, բայց ոչ պակաս քան 2,000,000 ՀՀ դրամ, իսկ հաշվետու տարվա տարեկան արդյունքներով վնաս ստանալու դեպքում Երևան համայնքի բյուջե վճարել տուգանք՝ 1,000,000 ՀՀ դրամ,

2) Հավատարմագրային կառավարիչն իրավունք չունի օտարել, գրավ դնել, վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնել Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ և շարժական գույքը,

3) Հավատարմագրային կառավարիչը պարտավորվում է գույքի վերակառուցման, հիմնանորոգման, կահավորման և բարեկարգման նպատակով՝ հավատարմագրային կառավարման առաջին 5 տարիների ընթացքում կատարել առնվազն 200,000,000.0 ՀՀ դրամի չափով ներդրումներ,

4) պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման՝ Հավատարմագրային կառավարչի միջոցների հաշվին,

5) հաշվետու տարվա համար, համաձայնեցված տարեկան ծրագրով, նախատեսված ներդրումային պարտավորությունները պայմանագրով սահմանված ժամկետում չկատարելու կամ մինչև 50 տոկոսը կատարելու դեպքում ընկերությունը պարտավոր է 3 ամսվա ընթացքում կատարել նախատեսված, բայց չկատարած ներդրումներն ամբողջությամբ՝ միաժամանակ Երևան համայնքի բյուջե վճարելով տուգանք՝ չկատարված ներդրումների գումարի 20 տոկոսի չափով,

6) հաշվետու տարվա համար, համաձայնեցված տարեկան ծրագրով, նախատեսված ներդրումային պարտավորությունները պայմանագրով սահմանված ժամկետում 50 կամ ավելի տոկոսով կատարելու, սակայն ամբողջությամբ չկատարելու դեպքում ընկերությունը պարտավոր է 2 ամսվա ընթացքում կատարել նախատեսված, բայց չկատարած ներդրումներն ամբողջությամբ՝ միաժամանակ Երևան համայնքի բյուջե վճարելով տուգանք՝ չկատարված ներդրումների գումարի 10 տոկոսի չափով,

7) ներդրումային ծրագրով նախատեսված՝ հիմնադրին վճարման ենթակա չափով զուտ շահույթի վճարումը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 15-ը չվճարելու դեպքում Հավատարմագրային կառավարիչը պարտավոր է մեկամսյա ժամկետում ապահովել ներդրումային ծրագրով նախատեսված չափով զուտ շահույթի վճարումը և միաժամանակ Երևան համայնքի բյուջե վճարելով տուգանք՝ այդ գումարի չափով,

8) Հավատարմագրային կառավարչի կողմից սույն որոշման 5-րդ կետի 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Հիմնադիրը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը՝ այդ մասին օրենսդրությամբ սահմանված կարգով տեղյակ պահելով հավատարմագրային կառավարչին: Պայմանագիրը լուծելու դեպքում մինչև պայմանագրի լուծումը հավատարմագրային կառավարչի ստանձնած պարտավորությունները ենթակա են կատարման,

9) Հավատարմագրային կառավարիչն իրավունք չունի Հավատարմագրային կառավարման մասին պայմանագրով իրեն վերապահված իրավունքների և պարտականությունների կատարումը վերապահել երրորդ անձանց:

10) Հավատարմագրային կառավարիչն իրավունք չունի երրորդ անձանց հանձնարարել սույն Պայմանագրով իր վրա դրված պարտականությունների կատարումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝28, դեմ՝10, ձեռնպահ՝14
Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

ԸՆԴՄԻՋՈՒՄ.
Նիստը վերսկսվեց ժ.14.20-ին:

10. **ԼՍԵՑԻՆ** - 2009 թվականից մինչև 2013 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արխիվում պահպանվող, Երևան համայնքի սեփականությունը համարվող որոշ արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Արթուր Մկրտչյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Արսեն Կարապետյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Հայկ Միրզոյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Լյուդմիլա Սարգսյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ
5. Հասմիկ Խաչունց-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի տեղակալ Ս.Հարությունյանը և քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Ա. Մկրտչյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «2009 թվականից մինչև 2013 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արխիվում պահպանվող, Երևան համայնքի սեփականությունը համարվող որոշ արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Մեսրոպ Պապիկյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. 2009 թվականից մինչև 2013 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում պահպանվող, Երևան համայնքի սեփականություն համարվող սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերով նշված արխիվային փաստաթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցել «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

1) Երևանի քաղաքապետի 2009-2013թթ. մշտական պահպանության որոշումներ.
2) աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովի 2009-2013թթ. մշտական պահպանության ակտեր.
3) աշխատակազմի հանրակրթության վարչության 2009-2013թթ. երկարաժամկետ պահպանության փաստաթղթեր:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 42 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝39, դեմ՝0, ձեռնպահ՝2
Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

11. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար
2. Գայանե Մելքոմ Մելքոմյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Թեհմինա Վարդանյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լիլիթ Կիրակոսյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

«Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Հ.Սարգսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի մասին» N186-Ն որոշմամբ հաստատված NN 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN1-4 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 42 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝39, դեմ՝0, ձեռնպահ՝3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Որոշվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2020 թվականի մարտի 19-ին, ժամը 11.00-ին:

ԸՆԴՄԻՋՈՒՄ:

Նիստը վերսկսվեց ժամը 15.30-ին:

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին տրվեցին պատասխաններ (սղագրությունը կցվում է):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝ Ն. Դուկասյան